

ԱՄՆ ԵՂԵԼ ԵՎ ՄՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԹԻՎ ՄԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ



Հուլիսի 31-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հրավերով, երկօրյա այցով Վրաստանում էր գտնվում Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխնախագահ Մայք Փենսը՝ տիկնոջ հետ միասին:

փոխանցեց ԱՄՆ նախագահի գլխավոր ուղերձը. «ԱՄՆ պաշտպանում է Վրաստանը»:
- Մենք բարձր ենք գնահատում վրաց-ամերիկյան հարաբերությունները, որոնք վերջին քսանհինգ տարիների ընթացքում առանձնակի զարգացում են ապրում: Վրաստանը մենք համարում ենք ռազմավարական կարևորագույն գործընկեր, հարգում ենք նրա տարածքային ամբողջականությունը եւ ՆԱՏՕ-ին անդամակցության միտվածությունը: - հայտարարեց Մայք Փենսը:

Իր հերթին, Գիորգի Կվիրիկաշվիլին ԱՄՆ փոխնախագահին շնորհակալություն հայտնեց Վրաստան կատարած այցի համար, այն գնահատելով որպես Վրաստանի նկատմամբ ԱՄՆ կառավարության կարեւորագույն աջակցության դրսևերում:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության հիմնական հարցերը: Ընդգծվեց պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության կարեւորությունը եւ ԱՄՆ վիթխարի դերը Վրաստանի զինված ուժերի զարգացման ու պաշտպանունակության զարգացման գործում:

Հանդիպմանը քննարկեցին վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության հիմնական հարցերը: Ընդգծվեց պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության կարեւորությունը եւ ԱՄՆ վիթխարի դերը Վրաստանի զինված ուժերի զարգացման ու պաշտպանունակության զարգացման գործում: Հանդիպմանը քննարկեցին վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության հիմնական հարցերը: Ընդգծվեց պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության կարեւորությունը եւ ԱՄՆ վիթխարի դերը Վրաստանի զինված ուժերի զարգացման ու պաշտպանունակության զարգացման գործում:

Օգոստոսի 1-ին, Վրաստանի պետական գրասենյակում, տեղի ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի հանդիպումը:

Հանդիպման սկզբում ԱՄՆ փոխնախագահը՝ Վրաստանի կառավարության ղեկավարին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ նրան

տուն համագործակցության կարեւորությունը եւ ԱՄՆ վիթխարի դերը Վրաստանի զինված ուժերի զարգացման ու պաշտպանունակության զարգացման գործում: Հանդիպմանը քննարկեցին վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության հիմնական հարցերը: Ընդգծվեց պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության կարեւորությունը եւ ԱՄՆ վիթխարի դերը Վրաստանի զինված ուժերի զարգացման ու պաշտպանունակության զարգացման գործում:

Վրաստանի վարչապետը եւ ԱՄՆ փոխնախագահը խոսեցին նաեւ բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի մասին: Վարչապետը Մայք Փենսին շնորհակալություն հայտնեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության հարցում ԱՄՆ հաստատական դիրքորոշման կապակցությամբ:

ԱՄՆ փոխնախագահն առանձնակի ընդգծեց միջազգային անվտանգության ապահովման գործում վրացի զինծառայողների ներդրումը:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանի կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները: Ինչպես նշեց Գիորգի Կվիրիկաշվիլին, այսօր երկիրն ունի առավել նպաստավոր բիզնես միջավայր, կոռուպցիայի եւ բյուրոկրատիայի նվազեցումներ, ցածր հարկեր, ինչը կարող է եւ պետք է հետաքրքրի ամերիկյան գործարար շրջանակներին: Ընդգծվեց ենթակառուցային նախագծերում ամերիկյան ընկերությունների շահագրգռվածությունը եւ մասնակցության կարեւորությունը: Հանդիպմանը կողմերը պատրաստակամություն հայտնեցին խորացնել երկու երկրների միջեւ ռազմավարական համագործակցությունը:

Հանդիպման ավարտին, Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Մայք Փենսը հանդես եկան համատեղ մամլո ասուլիսով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

«ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ-2017»-Ը՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՐՉ ՕՐԻՆԱԿ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՈՒՄ ԵՆ ԱՄԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, թվով երրորդ անգամ Վրաստանի Վազիանի ռազմակայանում, հուլիսի 31-ին, մեկնարկեցին եւ մինչեւ օգոստոսի 12-ը կշարունակվեն «Արժանի գործընկեր-2017» զորավարժությունները, որոնց մասնակցում են ավելի քան 2.800 զինծառայող՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Թուրքիայից, Սլովենիայից, Վրաստանից, Ուկրաինայից եւ Հայաստանից:

Օգոստոսի 1-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսը, Վազիանի զորավարժարանում, հանդիպում ունեցան «Արժանի գործընկեր-2017» զորավարժություններին մասնակից վրացի եւ ամերիկյան զինծառայողների հետ:



Նշենք, որ, չնայած պաշտոնական հրավերի, Ադրբեջանը հրաժարվեց մասնակցել զորավարժություններին: Ավելացնենք, որ Ադրբեջանը չէր մասնակցել նաեւ վերջերս Ռումինիայում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի զորավարժություններին:

ՇՆՈՐՉԱՎՈՐ ԾՆՈՒՆԴԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՕՉԱՆ



ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՅՎՈՒՄ ԵՎ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Այսօր՝ օգոստոսի 5-ին, ժամը 11:00-ին, Թբիլիսիի Ամաղեբա (նախկին՝ Դավիթաշվիլի) փողոցի 18 հասցեում, հայ մեծանուն գրող Հովհաննես Թումանյանի թբիլիսյան բնակարանում, հանդիսավորապես բացվելու է Մեծն Լոռեցու անունը կրող գիտամշակութային կենտրոնը:

Իսկ երեկ, օգոստոսի 4-ին, Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ տաճարում կայացավ «Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոնի բացմանը նվիրված համերգ՝ Մակար Եկմայանի անվան հոգեւոր երգչախմբի կատարմամբ: Հյուրերին եւ ներկաներին իրենց օրհնությունը բերեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակության ղեկավար, Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստյանը: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Սիլիստրյանը, Վարդան Ջիհչյանի հիշատակի հիմնադրամի Հայաստանի եւ ԱՄՆ գրասենյակների տնօրեններ Արմեն Հակոբյանը եւ Էլիզա Մինասյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրդյանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիլիպյանը, Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի բաժնի վարիչ, հայագետ Քեթեան Օթարաշվիլին եւ ուրիշներ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԸՆԴՊԾՎԵՑ ԱՄՆ ՓՈԽՆԱՍՏԱԿԱԶԻ ԱՅՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՈՂՈՎ ԶԳՏՈՒՄ ԵՎ ԿԱՐԿՎՈՐԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Օգոստոսի 3-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:



Նիստում վարչապետը հանգամանալի խոսեց ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի Վրաստան կատարած այցի նշանակության, ամերիկյան բարձրաշտոնյայի հետ անցկացրած բանակցությունների, քննարկած հարցերի եւ ձեռք բերած պայմանավորվածությունների մասին:

Անդրադառնալով Ռուսաստանի հետ հարաբերությունների թեմային, վարչապետը շեշտեց, որ Վրաստանը խաղաղ, կառուցողական ոգով ձգտում է հասնել ՌԴ հետ հակամարտության քաղաքական կարգավորման: «Վրաստանն ամեն ինչ կանի, որպեսզի միջազգային ռազմավարական գործընկերների աջակցությամբ եւ խաղաղ, կառուցողական ռե- ժիմով հասնի Ռուսաստանի հետ հակամարտության քաղաքական կարգավորման», -ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց. «Վրաստանի խաղաղ միավորումը երկրի գլխավոր խնդիրն է: Ես բնավ չեմ կասկածում, որ այդ նպատակին կհասնենք հաջողությամբ եւ խաղաղությամբ»,- ընդգծեց նա:

Միեւնույն ժամանակ՝ Գիորգի Կվիրիկաշվիլին, խոսելով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Սուխումի առաջիկա այցի մասին, հայտարարեց, որ «ՌԴ բարձրաստիճան անձանց այցերն» Աբխազիա, «Վրաստանից այդ տարածաշրջանի բռնի անջատումն օրինականացնելու փորձերի շարունակությունն են»:

ԱՅՑ

ԱՄՆ ԵՂԵԼ ԵՎ ՄԵՈՒՄ Է ՎՐԱՍԱՆԻ ԹԻՎ ՄԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՄԱՅՔ ՓԵՆՍ. «ՄԵՆՔ ԶԵՐ ԿՈՂՔԻՆ ԵՆՔ»

- ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն ինձ գործուղել է՝ ձեր կառավարությանն ու վրաց հրաշալի ժողովրդին հասցեագրված պարզ ուղերձով՝ «Մենք ձեր կողքին ենք»: Այդ մասին հայտարարեց ԱՄՆ փոխնախագահ



Մայք Փենսը՝ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ համատեղ մամուլի ասուլիսում:

Նրա խոսքով, ԱՄՆ վարչակազմը միշտ խիստ պատասխան կտա այն երկրներին, ովքեր հավակնություններ կունենան Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության դեմ:

Մայք Փենսի հավաստմամբ, Միացյալ Նահանգները պատրաստ են է՛լ ավելի մոտ կանգնել Վրաստանին, է՛լ ավելի ընկալել նրա միտումները եւ է՛լ ավելի ամրացնել երկկողմ հարաբերությունները: Նրա խոսքով, Վրաստանը ԱՄՆ-ի ռազմավարական գործընկերն է. «Վրաստանի բնակչության արիությունը միշտ մեծ տպավորություն է գործել ինձ վրա: Վրաստանը գտնվում էր ժողովուրդների բանտում՝ Խորհրդային Միությունում: Հետո այդ դաժան վարչակազմը տապալվեց, եւ Վրաստանն աջակցության համար դիմեց Արեւմուտքին եւ եվրոպական երկրներին, մենք պատրաստ ենք մոտ կանգնել Վրաստանին, է՛լ ավելի խորացնել մեր հարաբերությունները: Մենք պատրաստ ենք լրիվությամբ գործադրել մեր ջանքերը, որպեսզի Վրաստանն առավել ուժեղանա ռազմավարական տեսանկյունից եւ անվտանգության առումով»,- հայտարարեց Փենսը:

«ԿԳԱ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿԸ, ԵՐԲ ՎՐԱՍԱՆԸ ԿՆԵԻ ԻՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԳՎՐՁԸ»

Անդրադառնալով բռնազավթված տարածքների թեմային՝ ԱՄՆ փոխնախագահը վստահություն հայտնեց, որ ձգձգվող հակամարտությունները հնարավոր է կարգավորել երկխոսության միջոցով: Մայք Փենսը վստահություն հայտնեց, որ կգա այն ժամանակը, երբ Վրաստանը կնշի իր տարածքների վերադարձը: Նրա խոսքով, Միացյալ Նահանգները պաշտպանում են Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ այդ աջակցությունը այն օրվանից եւ ցուցաբերում, երբ «ռուսական տանկերն իրականացրին Վրաստանի տարածքի բռնազավթումը»: Փոխնախագահի համոզմամբ՝ ուժեղ եւ զարգացած Վրաստանն ի վիճակի կլինի միավորել երկիրը, եւ դրան հասնելու համար Միացյալ Նահանգները թիփխսին ցուցաբերում են տնտեսական օգնություն:

«ՆԱԽԱԳԱԶ ԹՐԱՄՓԸ ԵՎ ԵՍ ԿՈՂՄ ԵՆՔ, ՈՐ ՎՐԱՍԱՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՄ ԱՆԳՄ»

ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսը նշեց, որ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը պաշտպանում է այն հայտարարությունը, ըստ որի Վրաստանը պետք է դառնա ՆԱՏՕ անդամ:

- Մենք թրամփի հետ պաշտպանում ենք Բուխարեստի գագաթնաժողովի ուղերձն առ այն, որ Վրաստանը դառնա ՆԱՏՕ անդամ: Վրաստանի ժողովուրդը սրընթաց կերպով շարժվում է այդ ուղղությամբ,- հայտարարեց Փենսը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

Փոխնախագահը եւս մեկ անգամ ընդգծեց, որ իր հետ բերել է թրամփի ուղերձը՝ հետեւյալ բովանդակությամբ. «Մենք ձեր կողքին ենք, ԱՄՆ միշտ կաջակցի Վրաստանին»:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍԱՎ, ԹԵ ՈՐՔԱՆ ՄԵՑ Է ԱՄՆ ԱՋԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՍ ԴՍՄՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՎՐԱՍԱՆԻ ՀԱՄԱՐ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի հետ անցկացրած համատեղ մամուլի ասուլիսում, հայտարարեց, որ ԱՄՆ փոխնախագահի ներկայիս այցը ողջ բնակչությանը ցույց տվեց այն մեծ աջակցությունը, որը ԱՄՆ ցուցաբերում է Վրաստանին եւ դա պատմական հնարավորություն է երկրի համար: «Մենք հստակ ուղերձներ ստացանք Վրաստանի աջակցության, նրա տարածքային ամբողջականության, մեր արտաքին առաջնահերթությունների կապակցությամբ: ԱՄՆ եղել է մնում է Վրաստանի թիվ մեկ ռազմավարական գործընկերը եւ փոխվարչապետի այդ այցը դրա վկայությունն է: Մենք երախտագի-



տության զգացում ենք տածում փոխնախագահի նկատմամբ, ով, իր եվրոպական առաջին շրջայցի շրջանակներում, Եստոնիայի եւ Չեռնոգորիայի հետ միասին, այցելեց Վրաստան: Բնականաբար, մենք երախտիքի մեծ զգացում ենք տածում նաեւ նախագահ Թրամփի նկատմամբ, եւ որի ուղերձը փոխնախագահը հասցրեց մեզ»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

«ՄԵՉ ՀԱՄԱՐ ԱՄՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՄԵՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»

Անդրադառնալով բռնազավթված տարածքների թեմային, Վրաստանի վարչապետը նշեց, որ վրաց-ռուսական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում Միացյալ Նահանգները կարեւորագույն դեր են կատարում: «Մենք բարձր ենք գնահատում ԱՄՆ-ի կայուն եւ հաստատուն դիրքորոշումը Վրաստանի տարածքային ամբողջականության հարցում»,- ասաց Վրաստանի վարչապետը՝ հավելելով, որ նախագահ Թրամփի, փոխնախագահ Փենսի, ԱՄՆ նոր վարչակազմի եւ կոնգրեսի որոշումը Վրաստանի տարածքների բռնազավթման հարցում անմախաղեպ է: «Այսօր մենք խոսեցինք այն մեծ մարտահրավերների մասին, որոնց առջեւ կազմած է մեր երկիրը բռնազավթման արդյունքում: ԱՄՆ մեծ դեր է կատարում ժնեի միջազգային բանակցությունների ձեւաչափում եւ նշանակալից է, որ երկրի տարածքների ապառքնազավթման համար, բարձր մակարդակի ներգրավմամբ, ընդունի կոնկրետ որոշումներ եւ ապահովի Վրաստանի անվտանգությունը»,- նշեց Կվիրիկաշվիլին:

- ԱՄՆ-ի աջակցությունը շատ կարեւոր է վրաց-ռուսական հարաբերությունների խաղաղ կարգավորման գործընթացի համար, ընդգծեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին՝ համատեղ մամուլի ասուլիսում: «ԱՄՆ հաստատականորեն պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը՝ մեր երկրի միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակներում,- ասաց նա:

«ԱՄՆ ՄԵՑ ԳԵՐ ԿԱՏԱՐԵՅՑ ԵՐԿՐՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

Վրաստանի կառավարության ղեկավարը համատեղ մամուլի ասուլիսում կարեւորեց նաեւ, որ Փենսի հետ հանդիպման ընթացքում «քննարկվել են Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմավարական գործընկերության ընդլայնման լայն սպեկտրի հարցեր»:

Վրաստանի վարչապետն առանձնակի ընդգծեց այն փաստը, որ Միացյալ Նահանգները նշանակալի դեր են կատարել երկրում ժողովրդավարական ինստիտուտների ձեւավորման գործում:

Խոսելով երկու երկրների միջեւ համագործակցության խորացման անհրաժեշտության մասին, վարչապետը հայտարարեց, որ Վրաստանն այն գործընկերն է, ով ԱՄՆ-ի հետ պատրաստ է բարձր մակարդակով իրականացնել առեւտրական եւ ներդրումային համագործակցություն, որը հիմնված կլինի փոխշահավետ տնտեսական գործունեության վրա: «ԱՄՆ-ի հետ միասին, վերջին քսանհինգ տարվա ընթացքում, մենք իրականացրել ենք էներգետիկական նշանակալի շատ նախագծեր, որոնք ապահովում են եվրատլանտյան էներգամովտանգությունը: Մենք պատրաստ ենք գործել այդ ուղղությամբ նաեւ առաջիկայում»,- հայտարարեց վարչապետը:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԸՆԳԳԻՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Վրաստան կատարած այցի շրջանակներում ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսը թիփխսի «Մարիոտ» հյուրանոցում հանդիպում ունեցավ երկրում գործող ընդդիմադիր չորս կուսակցությունների՝ «Միասնական ազգային շարժման», «Եվրոպական Վրաստան», «Ազատ ժողովրդավարներ» եւ «Կառուցողական շարժում» կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկրի առջեւ ծառայած արտաքին սպառնալիքների եւ մարտահրավերների հարցը, առանձին ուշադրություն բեւեռեցին ներքին իրավիճակի, մասնավորապես, առաջիկա ընտրությունների, ընդդիմության քաղաքական հետապնդումների եւ ոչ պաշտոնական կառավարման հարցերին: Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները ԱՄՆ փոխնախագահի ուշադրությունը բեւեռեցին նաեւ ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման արգելակող այլ հարցերի, մասնավորապես՝ «Ռուսթալի-2» հեռուստաընկերության շուրջ ծավալված իրադարձությունների վրա:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՅ ԴՍՏՐԻԱՐՔԱՐԱՆ



ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսը՝ տիկնոջ հետ այցելեց Վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարքարան էլ հանդիպում ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Միոնիի Սուրբ եկեղեցում տեղի ունեցած հանդիպմանը Սրբազնագույնն ու Երանաշնորհը՝ ԱՄՆ փոխնախագահին նվիրեց ոսկե ապարանջան, իսկ նրա տիկնոջը՝ ոսկե խաչ: Վրաց Պատրիարքը ԱՄՆ փոխնախագահի միջոցով նվերներ փոխանցեց նաեւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին եւ երկրի առաջին տիկնոջը:

ՄԱՅՔ ՓԵՆՍԸ ՄԵՎԵՅՑ ՎՐԱՍԱՆԻՉ

Օգոստոսի 1-ին Վազիանի ռազմակայանում «Արժանի գործընկեր-2017» զորավարժության ընթացքը դիտելուց հետո, ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսը՝ տիկնոջ եւ պատվիրակության անդամների հետ Վրաստանից մեկնեց Մոնտենեգրո:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՔԻՄԱԿԱՆ ՕՐԵՆՔ


ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍ Է ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խորհրդարանական մեծամասնությունը պատրաստ է ընդդիմության հետ անցկացնել խորհրդատվություններ, Ստրասբուրգում Վենետիկի համձնաժողովի մասնակցությամբ:

Այդ մասին հայտարարեց «Վրացական երազանք» խմբակցության նախագահ Մամուկա Մդինարաձեն՝ մեկնաբանելով սահմանադրական բարեփոխումների հարցով Վենետիկի համձնաժողովի նախագահ Ջանի Բուկիլիոյի նամակը՝ վրացական ընդդիմությանը: «Մենք եւ վրացա-

կան ընդդիմությունը անվերապահորեն պետք է քննարկենք սահմանադրական փոփոխությունները: Կրկին անգամ հավաստում ենք, որ պատրաստ ենք եւ միտված ենք նման երկխոսության, օրինակ, Ստրասբուրգում Վենետիկի համձնաժողովի օգնությամբ եւ մասնակցությամբ»:

ասաց Մամուկա Մդինարաձեն: Նշենք, որ սահմանադրական փոփոխությունների քննարկման գործընթացի մասնակցության անբավարարության ու փոխգիշտման բացակայության կապակցությամբ, մտահոգություն է հայտնել նաեւ եվրահամձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինին՝ վրացական ոչ կառավարական կազմակերպությունների նամակի պատասխանում:



ԿԵՆՂԱՆԻ ԵՐՈՍ՝ ԲՈՒՆԱԶԱԿԹՎԱԾ ԳՈՏՈՒ ԵՐՎԱՅՆՔՈՎ

Օգոստոսի 8-ին, ռուս-վրացական պատերազմի իններորդ տարվա կապակցությամբ, «Ուժը միասնության մեջ է» շարժումը ծրագրում է կազմակերպել կենդանի շրթա՝ բռնազավթված գոտու երկայնքով: Խաղաղասիրական ակցիան կանցկացվի Կարապիլա, Խուրվալեթի ճանապարհահատվածում: Կազմակերպիչների խոսքերով, դա յուրահատուկ ուղերձ է, որ Վրաստանը երբեք չի հաշտվի տարածքների բռնազավթման հետ: Ակցիայի մասնակիցները հարգանքի տուրք կմատուցեն նաեւ պատերազմում զոհվածների հիշատակին:



ՎՐԱՑ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ ԵՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

Վենետիկի համձնաժողովի նախագահ Ջանի Բուկիլիոն, վրաց ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներին, սահմանադրական փոփոխությունների հարցով խորհրդատվությունների համար, սեպտեմբերի 6-ին հրավիրել է Ստրասբուրգ:

Վերոնջյալ հանդիպմանը մասնակցելու կապակցությամբ, ընդդիմադիր ինը կուսակցությունները խորհրդատվություններ են անցկացնում մյուս կուսակցությունների ոչ կառավարական

կազմակերպությունների հետ: Ոչ խորհրդարանական կուսակցությունների կարծիքով, Վենետիկի համձնաժողովի առաջարկությունը լուրջ հնարավորություն է սահմանադրական փոփոխությունների վերանայման համար՝ իշխանության վրա ճնշում գործադրելու ուղղությամբ:

ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ԲԱՐՁՐԱԼԵՌԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 37 ՄԻԱՎՈՐՈՎ

ԹԵՎ ԵՈՐ ՅՈՒՅՎԱԿՈՒՄ ՍԱՄՅԽԵ-ՉԱՎԱԽԵԹԻ ՏԱՐԱԾԱԿՐԱՆՆԻՑ ՈՉ ՄԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԳԻ ԸՆԴԳՐՎԵԼ

- Վրաստանի եւս 37 գյուղեր ստացան բարձրալեռնային գյուղերի կարգավիճակ, եւ նրանց բնակիչները կկարողանան օգտվել նպաստներից:



Կարելու է, որ, ըստ «Բարձրալեռնային շրջանների զարգացման մասին» օրենքի, 37 գյուղեր ավելացան բարձրադիր բնակավայրերի ցանկում, ինչը նշանակում է, որ ուսուցիչները, բժիշկները, թոշակառուները եւ սոցիալապես անապահովները կստանան լրացուցիչ նպաստներ, ինչպես նաեւ նպաստներ կստանան ընկերությունները եւ կազատվեն մի շարք հարկերից,- կառավարության նիստում հայտարարեց Վրաստանի վարչապետ Փիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ Վրաստանի կառավարությունը հույս ունի, որ բարձրալեռնային գյուղերի համար նպաստների ներդրումը կօգնի վերադարձնել բնակիչներին այդ շրջաններ: «Ես կարծում եմ, որ շատ մարդիկ հետ կգան, այդ միտումը, բարեբախտաբար, արդեն նկատվում է եւ, ենթադրաբար, կշարունակվի»,- ասաց վարչապետը:

հատուկ օրենք, որի համաձայն, ֆիզիկական անձինք ազատվում են եկամտահարկի եւ գույքահարկի վճարումից, իսկ ձեռնարկատերերն ազատվում են եկամտային հարկից եւ գույքահարկից:

Ըստ այդ օրենքի, այն ընտանիքները, ովքեր ապրում են Վրաստանի բարձրալեռնային շրջաններում, կստանան ամսական 100 լարի (42 դոլար) մեկ տարվա ընթացքում, պետության կողմից, առաջնեկի եւ երկրորդ երեխայի համար:

Այսօրվա դրությամբ, 3,7 հազար բնակավայրերից բարձրալեռնային կարգավիճակ ունեն կեսից ավելին:

Բարձրալեռնային է համարվում այն բնակավայրը, որը գտնվում է ծովի մակարդակից 1500 մ եւ առավել բարձրության վրա: Բացառիկ դեպքերում, ռելիեֆի, բնական եւ ժողովրդագրական պայմանների հիման վրա, այս կարգավիճակը կկարողանան ձեռք բերել ծովի մակարդակից 800 մետրից ներքե գտնվող բնա-

կավայրերը: Բարձրալեռնային շրջանների բնակիչներ ճանաչվել են նրանք, ովքեր մշտապես, ոչ պակաս, քան տարվա մեջ ինն ամիսն անընդմեջ ապրում են միեւնոյն վայրում եւ ունեն տեղում համապատասխան գրանցում:

Ավելացնենք, որ բարձրալեռնային կավայրերի մոր ցուցակում Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանից ոչ մի բնակավայր չի ընդգրկվել, չնայած նրա, որ Սամցխե-Ջավախեթի, հատկապես Ջավախեթի երկրամասի բնակավայրերը լիովին համապատասխանում են բարձրալեռնային կավայրերը ներկայացվող պահանջներին, շուրջ 40 գյուղեր դեռեւս գուրկ են այդ կարգավիճակից, հետեւաբար, դրանց բնակիչները չեն կարող օգտվել սահմանված արտոնություններից:


ԱՖՂԱՆՏԱՆՈՒՄ ԶՈՂՎԵԼ Է ՎՐԱՅԻ ԶԻՆՃԱՌԱՅՈՂ, ԵՎՄ ԵՐԵՔԸ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Աֆղանստանի Բագրամ ավիաբազայի հարակից տարածքի պարեկության ժամանակ հարձակում է իրականացվել պարեկների վրա: Հարձակման արդյունքում զոհվել է վրացի զինծառայող, կրտսեր սերժանտ, 25-ամյա Դինարի Բեքիաշվիլին: Կրտսեր սերժանտ Բեքիաշվիլին 2010 թվականից ծառայում է զինված ուժերում: Նա 1912 եւ 1914 թվականներին մասնակցել է խաղաղասիրական առաքելություններին, պարգևատրվել «Խաղաղարար գործողությունների մասնակցության համար» մեդալով: Վերոնշյալ հարձակման ժամանակ վիրավորվել են եւս երեք վրաց զինծառայողներ: Վիրավորված կապիտան Միխեիլ Գվիրջիշվիլու վիճակը ծանր է, իսկ ավագ լեյտենանտ Գիգի Խախտաշվիլու եւ կապրալ Գեգի Խարիշիաձեի առողջական վիճակը՝ բավարար: Բոլոր երեքն էլ գտնվում են Բագրամի ավիաբազայի հոսպիտալում:

Table with 3 columns: Category, Value, and another Value. Categories include SURVIVAL, DEATH, and WOUNDS.

Դուրսի 28-ի համեմատ, դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ՆԱԽԱԳԻԾ



«ՍՏԱՐԹԱՓԵՐ»-Ի ՆՐՉԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝ ՍՏԱՐԹԱՓԵՐԸ 2 ՄԻԼԻՈՆ ԱՐԻ ԳԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՍՏԱՅԵԼ

TBC բանկի «Ստարթափեր» նախագիծը հանրագումարում է հինգ ամսվա արդյունքները: Նախագծի մեկնարկից մինչ օրս ստարթափերի վարկից օգտվել է շուրջ 50 ստարթափ եւ սկսնակ գործարարների աջակցության համար տրվել է 2 միլիոն լարիի ֆինանսական օգնություն:

Նախագծին մասնակից ստարթափերը գործում են տարբեր ոլորտներում, այդ թվում՝ շինարարության ոլորտում, կոշիկի եւ հագուստի արտադրությունում, գյուղատնտեսությունում, զբոսաշրջությունում, փոխադրումներում եւ լոջիստիկայում, առողջապահության, տեխնոլոգիաների եւ այլ ոլորտներում: Ստարթափ վարկից բացի, նախագծի շրջանակներում, հատուկ ստարթափերի համար կազմվել է բանկային սպասարկման փաթեթ՝ ստարթափ-ԷՆԵՐՋԻ քարտը («Սոկար պետրոլիում Ջորջիայի» եւ TBC բանկի համատեղ քարտը, որը նախատեսում է վառելանյութի 15 թեթիով նվազ արժեք) եւ Ստարթափ լիզինգ: Սկսնակ գործարարներին այդ սպասարկումներով տրվել է արտոնյալ սակագներից օգտվելու հնարավորություն: Հինգ ամսվա ընթացքում «Ստարթափերի» բանկային սպասարկման փաթեթից օգտվել է շուրջ 6 հազար

ստարթափ ընկերություն, իսկ ստարթափ-ԷՆԵՐՋԻ քարտից՝ 200 ստարթափեր: Ստարթափերի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում նախագծի ոչ ֆինանսական ակտիվությունները: Նախագծի մեկնարկից մինչ օրս հատուկ ստարթափերի համար ներդրվել են վարժանքների եւ դասախոսությունների դասընթացներ, որոնք վարում են տարբեր ոլորտի արհեստավարժները: Արդեն շուրջ 300 ստարթափեր մասնակցել են դրանց, ինչը նպաստել է բիզնեսի կառավարման ունակությունների բարելավմանը: Ծրագրի եւս մեկ ոչ ֆինանսական բաժինը ստարթափերի լրատվամիջոցներով աջակցությունն է եւ դրա ժողովրդականացման աջակցությունը: Ծրագրի լրատվամիջոց գործընկերների կայքէջերն են՝ Ambebi.ge, Bpn.ge, Marketer.ge News.ge եւ «Գործարար առավոտ»



հաղորդման «Ստարթափեր» խորագիրը: Չորս ամսվա ընթացքում արդեն 170 ստարթափ ընկերություններ եւ դրա հիմնադիրները ներկայացվել են հասարակայնությանը եւ նրանց մասին լույս են ընծայվել հոդվածներ, հարցազրույցներ եւ ռեպորտաժներ: Նախագծի շրջանակներում, հատուկ ստարթափերի համար, մշտապես նորանվանություններ են ներդրվում եւ մոտ ապագայում ծրագրվում է մի շարք նախաձեռնությունների ու նախագծերի իրականացում: TBC բանկի «Ստարթափեր» նախագծի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ www.starperi.ge կայքէջում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՄ

ՉՈՐՍ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՍՏԱՄԵՏ ԸՆԴՈՒՄԻԹՅԱՆԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ

Արեւմտամետ, ընդդիմադիր չորս կուսակցություններ՝ «Նոր Վրաստանը», «Հանուն Վրաստանի նոր միավորումը», «Եվրոպական ժողովրդավարները» եւ «Ազատության համար քաղաքացիական դաշինքը» մավորման որոշում ընդունեցին:

Նոր միավորման անունից հանդես եկավ «Հանուն Վրաստանի նոր միավորում» ղեկավար Մամուկա Գամդրելիձեն: Նրա խոսքով, ելնելով «Ուժը միասնության մեջ է» սկզբունքից, քաղաքական նոր միավորումը ընդդիմադիր քաղաքական բոլոր ուժերին, հասարակական կազմակերպություններին եւ հասարակության ակտիվ անդամներին կոչ արեց միավորվել ժողովրդավարական սկզբունքների շուրջ եւ առավելագույն թափանցիկության եւ մրցունակության պայմաններում անցկացնել պայքար եւ հոկտեմբերին, առաջիկա տեղական ընտրություններում առաջադրել տեղական մարմինների, այդ թվում՝ Թբիլիսիի քաղաքապետի ու սակրեբուլոյի անդամների թեկնածությունները:

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԴՈՒՆԱ



Հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի տնօրեն Պատա Իմնաձեի հայտարարությամբ, պատվաստումը Վրաստանում կարող է դառնալ պարտադիր:

Նրա խոսքով, համապատասխան նախաձեռնությունը պաշտպանում են հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնը, առողջապահության նախարարությունը եւ բժշկական հասարակայնության մեծամասնությունը: Նախաձեռնության դեմ հանդես են գալիս այն իրավաբանները, ովքեր իրենց դիրքորոշումը պարզաբանում են մարդու իրավունքների պաշտպանության գործով: Ինչպես նշեց Պատա Իմնաձեն, աշխարհի զարգացած երկրներում պատվաստման հարցը կարգավորված է օրենսդրությամբ: Նրա տեղեկատվությամբ, ԱՄՆ-ում պատվաստում չանցած երեխան չի կարող ստանալ կրթություն, իսկ Եվրոպայի մի շարք երկրներում պատվաստում չանցած ծնողը տուգանվում է 2500 Եվրոյով: - Ինչպես աշխարհի զարգացած շատ երկրներում, Վրաստանում էլ պետք է գործի օրենսդրական մեխանիզմ: Եթե ծնողը չի գիտակցում, որ երեխան պետք է անցնի պատվաստում, ապա հասարակայնությունը պետք է պաշտպանվի նման ծնողից: Տեղի է ունենում դիմակայություն մարդու իրավունքների եւ հասարակության իրավունքների միջև: Նման դեպքերում, շատ երկրներում, այդ թվում՝ ժողովրդավարական երկրներում, գերակայությունը տրվում է հասարակական անվտանգությանը,- հայտարարեց Պատա Իմնաձեն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՀԱՆՐԱՅԻՆ 203 ԱՇԽԱՏԱԿՑԻ ԴԵՍ

Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի ներկայացրած հաշվետվության մեջ նշված է, որ, 2012 թվականի նոյեմբերից մինչև 2017 թվականի հունիսի 1-ը, քրեական գործ է հարուցվել հանրային 203 նախկին աշխատակիցների դեմ:

- 2012 թվականի նոյեմբերից մինչև 2017 թվականի հունիսի 1-ը քրեական գործ է հարուցվել հանրային 203 նախկին աշխատակիցների դեմ: Նրանց թվում են բարձր աստիճանավորներ՝ ներքին գործերի նախարար, արդարադատու-

թյան նախարար, պաշտպանության նախարար, գլխավոր շտաբի պետ, ռազմական ոստիկանության պետի տեղակալ, սահմանադրական անվտանգության դեպարտամենտի ղեկավար, հատուկ օպերատիվ դեպարտամենտի ղեկավար, քրեական ոստիկանության դեպարտամենտի տնօրեն, հակահետախուզության դեպարտամենտի փոխտնօրեն, ՆԳ նախարարության հատուկ գործողությունների կենտրոնի ղեկավար, պատիժների կատարման դեպարտամենտի ղեկավար»,- ասված է գլխավոր դատախազի հաշվետվության մեջ:


ԲՈՆԱԳԱՐԹՎԱԾ ՏԱՐԱԾՔ

ԱԲԽԱԶԻԱՅԻ ԲՈՆԱԿՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտարարել է Ռուսաստանի նախագահի մամուլ ծառայությունը, օգոստոսի 8-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը պաշտոնական այցով մտադիր է լինել Սուխումիում:

Նշվում է, որ, այցի շրջանակներում, բանակցություններ կտարվեն երկկողմ տնտեսական համագործակցության խորացման, պաշտպանության եւ անվտանգության ոլորտում փոխգործողության հստակեցման, ժնեում անցկացվող երկխոսության ընթացքի վերաբերյալ: Հատկանշական է, որ ՌԴ նախագահի ներկայիս այցը ժամանակի առումով համընկնում է վրաց-ռուսական 2008 թվականի պատերազմի իններորդ ամյակին եւ ամիջականորեն անցկացվում ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի Վրաստան պաշտոնական այցից հետո: Վրաստանի ԱԳ նախարարությունը հատուկ հայտարարությամբ իր բողոքն է հայտնել Ռուսաստանի նախագահի Աբխազիայի կապակցությամբ, այն գնահատելով որպես Ռուսաստանի կողմից Վրաստանի բաղկացուցիչ մասը կազմող Աբխազիան բռնակցելու հերթական միտում: Նշված է, որ Վրաստանի կառավարության կողմից իրականացվող խաղաղասիրական միջոցառումների ֆոնի վրա ռուսական կողմի նմանօրինակ սադրիչ գործողությունները չեն կարող նպաստել վրաց-ռուսական հարաբերությունների կարգավորմանը:

Նրա խոսքով, համապատասխան նախաձեռնությունը պաշտպանում են հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնը, առողջապահության նախարարությունը եւ բժշկական հասարակայնության մեծամասնությունը: Նախաձեռնության դեմ հանդես են գալիս այն իրավաբանները, ովքեր իրենց դիրքորոշումը պարզաբանում են մարդու իրավունքների պաշտպանության գործով: Ինչպես նշեց Պատա Իմնաձեն, աշխարհի զարգացած շատ երկրներում, այդ թվում՝ ժողովրդավարական երկրներում, գերակայությունը տրվում է հասարակական անվտանգությանը,- հայտարարեց Պատա Իմնաձեն:



ԱՄՆ

ՊԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԱՍՆՇՏԱԲԱՅԻՆ ՓԱԹԵԹԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՍ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ստորագրել է Ռուսաստանի դեմ ուղղված պատժամիջոցների փաթեթը:

Փաթեթը ձայների ճնշող մեծամասնությամբ հաստատվել էր ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի կողմից: 2014-ից ի վեր Ռուսաստանի դեմ ուղղված պատժամիջոցներից այս փաթեթն ամենամասշտաբայինն է:

Կրեմլը փաթեթը գնահատել է որպես «խիստ բացասական»: Ավելի ուշ, Մոսկվան նախաձեռնել է Ռուսաստանում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչության անձնակազմի կրճատումը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

Եվրամիության բնակչությունն անցյալ տարի ավելացել է 1,5 միլիոնով՝ հասնելով 511,8-ի: Այդ մասին ասված է Եվրոստատի հաշվետվության մեջ:

Դրանում ընդգծվում է, որ 2016 թվականին Եվրոպայում ծնունդների եւ մահերի թվաքանակը գործնականում եղել է հավասար: Այսպիսով, բնակչության բնական աճը գրոյական էր: Այլ խոսքով, 1,5 մլն նոր քաղաքացիները ժամանել են արտասահմանից:

Առաջատարները եղել են 82,8 մլն բնակչությամբ Գերմանիան (աճը՝ 625 հազար), Ֆրանսիան՝ 67 մլն (աճը՝ 270 հազար), Մեծ Բրիտանիան՝ 65,8 մլն բնակչությամբ (աճը՝ 425 հազար): Բնակչության ոչ մեծ անկում է գրանցվել Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, Ռումինիայում, Խորվաթիայում, Պորտուգալիայում եւ Իտալիայում:

ՊԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՍ

Եվրոպական հանձնաժողովը, վեճի առարկա դարձած դատական բարեփոխման պատճառով, Լեհաստանի նկատմամբ պատժամիջոցային ընթացակարգ է սկսել: Եվրահանձնաժողովը պաշտոնական ծանուցմամբ նամակ է ուղարկել Վարշավային, երբ հունիսի 28-ին Լեհաստանում պաշտոնապես հրապարակվել է դատարանների աշխատանքի օրենքը:

Ավելի վաղ՝ Եվրահանձնաժողովում հայտարարվել էր, եթե այդ օրենքը հրապարակվի, ապա Եվրահանձնաժողովը պատրաստ է գործի դնել պատժամիջոցային ընթացակարգ՝ Լեհաստանի կողմից ԵՄ օրենսդրության խախտումը կանխելու ուղղությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՅՑ ՄԵԿԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳՈՒՆՔՆԵՐԸ



Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ հակամարտությունների ուղղությամբ գործող փորձագետների եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ եւ հանրագումարեց պետնախարարի պաշտոնում մեկամյա գործունեության արդյունքները:

սին, վերոնշյալ քաղաքականության շրջանակներում կատարված եւ կատարվելիք քայլերի, բռնազավթված տարածքների եւ բաժանման գծի երկայնքով առկա իրավիճակի մասին: - Նշանակալի է, որ խաղաղարար գործընթացներում ներգրավված փորձագետները եւ ոչ կառավարական կազմակերպությունները լիարժեք տեղեկատվություն ստանան մեր գործունեության մասին: Սույն հանդիպմանը քննարկեցինք Վրաստանի բռնազավթված տարածքներում առկա իրավիճակը, մարտահրավերները, որոնց առջև կանգնած է երկիրը, բռնազավթման գործընթացն ու դրա կարգավորման ուղիները, նախաձեռնություններն ու ծրագրերը, որոնք մշակել է Վրաստանի կառավարությունը եւ մեր աշխատակազմը,- հանդիպման մեկնարկին հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին: Հանդիպումն անցկացվեց երկխոսության ձևաչափով, եւ պետնախարարը պատասխանեց մասնակիցների հարցերին: Քեթեւան Ցիխելաշվիլու հայտարարու-

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարը խոսեց Վրաստանի կառավարության հաշտեցման եւ ներգրավման քաղաքականության առաջնահերթությունների եւ հիմնական ուղղությունների մասին: